Արձանագրություն N5
<<ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/5-Ն>> ծածկագրով գնանշման հարցման
ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 07 նոյեմբերի 2019թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Օհանջանյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Սարգսյանը և Ա. Մակարյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

1. <<ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/5-Ն>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի վերաբերյալ

Օրակարգ՝

1. ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/5-Ն ծածկագրով ընթացակարգի մասնակից՝ <<Հայջրնախագիծ ինստիտուտ>> ՓԲԸ կողմից ներկայացված հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով (Հավելվածներ 3 և 3.2) նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքների քննարկում:

2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ առաջին տեղ զբաղեցրած <<Հայջրնախագիծ ինստիտուտ>> ՓԲԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ եզրակացության ուսումնասիրության արդյունքների քննարկում:

Ելույթ ունեցավ գնահատման հանձնաժողովի նախագահ Վ. Օհանջանյանը և նշեց, որ գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ուսումնասիրվել են հրավերով պահանջվող որակավորման չափանիշների վերաբերյալ 1-ին տեղ զբաղեցրած ընկերությունների կողմից ներկայացված փաստաթղթերը:

2. Գնահատման արդյունքների հաստատման վերաբերյալ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի առաջին տեղ զբաղեցրած մասնակից վերաբերյալ՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ հարցումը ներկայացվել է 30.10.2019 թվականին:

04.11.2019 թվականին ստացվել է համապատասխան եզրակացությունը:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏՈՒՄ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հանձնաժողովը որոշեց՝

1. Հիմք ընդունելով ստացված եզրակացությունը, մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը և ամփոփելով գնահատման թերթիկները՝ «ՀՀ Վայոց Ձորի մարզի Հեր-Հերի ջրամբարից ինքնահոս ջրատարի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության տրամադրման աշխատանքների» ձեռքբերման նպատակով կազմակերպված ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/5-Ն ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց.
2. ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/5-Ն ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել <<Հայջրնախագիծ ինստիտուտ>> ՓԲԸ-ի
3. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին,
4. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

5. Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել նշված չափաբաժիններում ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի վերաբերյալ

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0
Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ ..... Վ. Օհանջանյան

Անդամներ ..... Վ. Սարգսյան

..... Ա. Մակարյան

Քարտուղար ..... Ա. Սարգսյան